

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2013 թ.

N 318-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**,

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների 2013 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի պահպանմանը և վերարտադրությանը:

2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Կենդանական աշխարհի բնական կերպով վերարտադրության լիարժեք ապահովման համար բնապահպանական, անտառտնտեսության, տեղական ինքնակառավարման և այլ շահագրգիռ մարմինների կողմից համապատասխան միջոցառումներ չեն իրականացվել, որոնք պետք է ուղղված լինեն վայրի կենդանիների, թռչունների գլխաքանակի և ձկան պաշարների ավելացմանը, ջրավազանների և ջրամբարների արդյունավետության բարձրացմանը, ձմեռային ժամանակաշրջանում վայրի կենդանիների և թռչունների լրացուցիչ կերակրմանը և այլն:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների 2013 թվականի ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռքբերել փասայանի, կաքավի և որոշ հազվագյուտ վայրի թռչունների գլխաքանակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերարտադրության համար:

Ձկան պաշարների ավելացման և Սարսանգի ու Մատաղիսի ջրամբարների օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով, ձեռք բերել և ջրավազաններում բաց թողնել ծածան տեսակի մանրաձկներ:

Նախատեսել վայրի թռչունների համար որոշ տարածքներում ծովի մակարդակից 1500-2500 մ բարձրության վրա ձմեռային ժամանակաշրջանում գիշատիչների համար դժվարամատչելի և դժվարանց թփուտներում կերի պաշարների տեղադրումը:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել բնապահպանության համակարգի տարածքային պետական տեսուչների, անտառային պետական ծառայության, ինչպես նաև համայնքների ներկայացուցիչների հետ համատեղ:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 4000,0 հազ. դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ